ՏԵՂԵԿԱՆՔ

«ԲԱՆԿԱՅԻՆ ԳԱՂՏՆԻՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ

ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հոդված 13.4. Բանկային գաղտնիքի տրամադրումը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին

(վերնագիրը խմբ. 09.06.17 ՀՕ-113-Ն)

1. «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով, «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքով և Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով սահմանված դեպքերում վարկային տեղեկատվության կամ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների տրամադրումը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին բանկային գաղտնիքի հրապարակում չի համարվում:

(13.4-րդ հոդվածը լրաց. 09.06.17 ՀՕ-109-Ն, խմբ. 09.06.17 ՀՕ-113-Ն, 25.03.20 ՀՕ-202-Ն)

Հոդված 13.5. Բանկային գաղտնիքի տրամադրումը Հաշվեքննիչ պալատին

(հոդվածը 22.05.24 ՀՕ-243-Ն օրենքի լրացման մասով ուժի մեջ է մտնում 2025 թվականի հունվարի 1-ից)

Հոդված 13.6. Բանկային գաղտնիքի տրամադրումը Վերահսկիչ-վերստուգիչ ծառայությանը

1. Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով սահմանված դեպքերում բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների տրամադրումը

Վերահսկիչ-վերստուգիչ ծառայությանը բանկային գաղտնիքի հրապարակում չի համարվում:

2. «Հանրաքվեի մասին» սահմանադրական օրենքով սահմանված բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների տրամադրումը Վերահսկիչ-վերստուգիչ ծառայությանը բանկային գաղտնիքի հրապարակում չի համարվում: